Գդանսկից Նիկոսիա. հայկական բեմը՝ միջազգային մշակութային հարթակներում

Սեպտեմբերը Երևանի մնջախաղի պետական թատրոնի համար նշանավորվեց երկու կարևոր միջազգային մասնակցությամբ:

Սկզբում թատրոնը ներկայացավ Լեհաստանի Գդանսկ քաղաքում՝ միջազգային պարի փառատոնի շրջանակում, իսկ օրեր անց՝ Նիկոսիայում՝ Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակին նվիրված մշակութային գալա-երեկոյին: Այս երկու այցն էլ հայկական բեմարվեստը միջազգային հանդիսատեսին ներկայացնելու կարևոր հնարավորություն դարձավ:

Գդանսկ. հայկական արվեստը՝ միջազգային պարի փառատոնում

Սեպտեմբերի 18-ին Գդանսկի «Ժակ» մշակութային ակումբում Երևանի մնջախաղի պետական թատրոնը ներկայացրեց Ռիմա Պիպոյանի «Ոսկոր» և «Խալի» բեմադրությունները՝ Գդանսկի 18-րդ պարի փառատոնի շրջանակում:

Թատրոնի մասնակցությունն իրականացվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Գդանսկի պարի փառատոնի աջակցությամբ:

Գդանսկի պարի փառատոնը տարբեր երկրներից ժամանած արվեստագետների էր միավորել՝ հանդիսատեսին ներկայացնելով ժամանակակից պարի և շարժման արվեստի բազմազան ուղղություններ: Սա հնարավորություն էր ազգային մշակութային տարրերը ներկայացնելու ժամանակակից լեզվով և դրանք ներառելու միջազգային ստեղծագործական երկխոսության մեջ:

«Ոսկոր» բեմադրությունն անդրադառնում է ներքին ուժի, ստեղծագործական ազատության և վերածննդի թեմաներին՝ դրանք փոխանցելով շարժման և մարմնի արտահայտչականության միջոցով:

«Խալի» բեմադրության կենտրոնում հայկական գորգն է: Այն բեմում ներկայանում է որպես հիշողության, պատմության և մշակութային ինքնության կրող: Կատարողները մարմնավորում են գորգի գույները՝ ստեղծելով կենդանի և փոխակերպվող բեմական պատկեր:

Նիկոսիա. Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակին նվիրված մշակութային գալա-երեկո:

Գդանսկյան միջազգային մասնակցությունից օրեր անց Երևանի մնջախաղի պետական թատրոնը հանդես եկավ Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում՝ Հայաստանի Հանրապետության անկախության 35-ամյակին նվիրված մշակութային գալա-երեկոյի շրջանակում:

Սեպտեմբերի 24-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության 35-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակում, Ստրովոլոսի քաղաքային թատրոնում տեղի ունեցավ հայկական մշակութային երեկո՝ կազմակերպված *VF Foundation* հիմնադրամի կողմից՝ Կիպրոսում Հայաստանի Հանրապետության դեսպանության աջակցությամբ:

Միջոցառումը միավորել էր հայկական մշակույթի տարբեր ուղղություններ՝ երաժշտություն և բեմարվեստ՝ Կիպրոսի հանդիսատեսին ներկայացնելով Հայաստանի մշակութային ժառանգության և ժամանակակից արվեստի համադրությունը:

Երեկոյին ներկա էին՝ Կիպրոսում ՀՀ դեսպան Իննա Թորգոմյանը, Կիպրոսի Հանրապետության մշակույթի փոխնախարար Կլեա Հաջիստեֆանու Պապաելինան, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաներ և դիվանագիտական կորպուսի անդամներ:

Գեղարվեստական ծրագիրը ներառում էր Հայաստանի պետական երգի թատրոնի «Կոմիտաս» նախագիծը, որը ներկայացնում է Կոմիտաս Վարդապետի երաժշտական ժառանգության ժամանակակից մեկնաբանությունը: Այնուհետև բեմում հանդես եկավ Երևանի պետական մնջախաղի թատրոնը՝ Ռիմա Պիպոյանի «Խալի» ժամանակակից պարային ներկայացմամբ:

«Խալի»-ի հիմքում հայկական ավանդական գորգն է՝ իր հարուստ խորհրդանիշներով և պատմական հիշողությամբ: Բեմադրության միջոցով գորգը վերածվում է շարժվող, կենդանի պատումի՝ ներկայացնելով մշակութային ժառանգությունը ժամանակակից բեմական լեզվով:

Նիկոսիայի մշակութային երեկոն Հայաստանի անկախության 35-ամյակի շրջանակում հայկական արվեստը Կիպրոսի հանդիսատեսին ներկայացնելու կարևոր առիթ էր: Այն միաժամանակ դարձավ Հայաստանի և Կիպրոսի միջև ձևավորված մշակութային ու բարեկամական կապերի ընդգծման ևս մեկ հարթակ:

Անկախության օրվան նվիրված միջոցառումների շրջանակում Կիպրոսում Հայաստանի Հանրապետության դեսպանությունն իրականացրել էր նաև կրթական և մշակութային այլ նախաձեռնություններ՝ անդրադառնալով Հայաստանի անկախության ճանապարհին, պետականության խորհրդին և հայ-կիպրական հարաբերություններին:

Սեպտեմբերյան այս երկու միջազգային մասնակցությունները ևս մեկ անգամ ցույց տվեցին, որ հայկական մշակույթը կարող է պահպանել իր ազգային ինքնատիպությունը՝ միաժամանակ խոսելով ժամանակակից արվեստի համընդհանուր լեզվով:

Գդանսկից Նիկոսիա՝ Երևանի մնջախաղի պետական թատրոնի ճանապարհը դարձավ հայկական արվեստի միջազգային ներկայության ևս մեկ պատմություն՝ երկու տարբեր մշակութային հարթակներում և երկու տարբեր առիթներով:

Տնօրեն Մ.Ս.Խաչատրյան